Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԼԵՆԻՆԱԿԱՆ[1]

Գնացքից իջնում ենք Լենինականի կայարանը և կառքով անցնում ենք քաղաքը — երկրորդ «մեծ» քաղաքը փոքրիկ Խորհրդային Հայաստանի:

Ահա վերջապես նրա չոր ու ցամաք փողոցները, տափակ տները, խոնավ, սև պատերը, հայացրած ցուցանակները: Առաջվա պես՝ էլի բիբլիական աբլաները նստած են դռների առջև, «պիվնոյներում» և սրճարաններում դարձյալ զվարճախոսում է Լենինականի Տարտարենը[2] — ճիշտ է, մի փոքր սմքած ու շշկլած:

Մենք տեղավորվում ենք մի հյուրանոցում, որի դռների վրա գրած է «ֆեդերացիա», իսկ պատին՝ «Անգլիա»: Իհարկե շուտով հաշտվում ենք այդ զվարճալիքի հետ, որովհետև արդեն մինչև հյուրանոց հասնելը՝ աջ ու ձախ կարդացել ենք քաղաքի ցուցանակները. Ֆլճյանի «պանդոկը» (իմա՛ постоялный двор), «առևտրական վաճառատուն» այսինչի, «անուշարան» այսինչի, և ուրիշ շատ մխիթարյան հայերենով կազմած ցուցանակներ: Կուզեի ասել՝ միամիտ հայերենով կազմած, բայց քանի որ լեզվական հարցերի տեղը չէ՝ անց կենանք:

Օրը կիրակի է: Գնում ենք «Բանվորի»[3] խմբագրատուն, որ գտնվում է Լուսբաժնի մեծ շենքի կողքին, այգու դիմաց: Առջևը Մարքսի հրապարակն է: Այստեղ է խմբվում երիտասարդությունը, տպագրիչներ, ժուռնալիստներ, բանաստեղծներ, բանվորներ և այլ աշխատավորներ՝ վերից վար նոր, անծանոթ դեմքեր: Ասում են, խոսում, ծիծաղում, վստահ իրենց անելիքի վրա, հուսադիր և ուրախ: Այս սերունդն է Լենինականն ստեղծողը. այս է, որ գլուխը բարին տալով, քարը՝ գլխին, կերպարանափոխում է Ալեքսանդրապոլը Լենինականի:

Լենինակա՞ն և ուրիշ ոչ մի անուն չէր սազի այս քաղաքին: Եվ այս ասում եմ անշուշտ ոչ քաղաքականությամբ զբաղվելու դիտավորությամբ, այլ պարզապես կուլտուրականի մտքով: Լոթիների, աբլաների, լոպպազների ու տերտերների քաղաքը սկսել է իր կերպարանքը փոխել: Նա ունի կանոնավոր երկաթուղային դեպո, շատ շուտով կվերջացնի մանածագործարանի շենքը և կսարքի մեքենաները, քարել է գլխավոր փողոցները, ունի սապոնի, գարեջրի գործարաններ, մուզեյ, արդեն սպառնալի կոոպերացիա, և ի՞նչ եք ուզում՝ շատ կանոնավոր, կարգին հայախոս օպերա[4]: Նաև եթե հաճելի է, շատ սրտաբաց զբոսարան-բլուր, որտեղից ձեր առջև բացվում է ամբողջ Շիրակն իր Արագածով, որը սավառնում է հորիզոնում հսկայական արծաթե աերոպլանի պես՝ ասենք նոր կենցաղի ոճով, թեև ֆուտուրիստ[5] չենք:

Եվ քանի որ իսկական ճամփորդական նկարագրություն չենք անելու (Լենինականը Հայաստանի քարտեզում ճերմակ տեղ չէ)՝ ուստի թույլ տվեք «վառարանից չսկսել վալսը»[5], այլ միայն հաղորդել սոսկ տպավորություններս:

Բազմազան տպավորություններ, որ առիթ են տալիս շատ խորհրդածությունների: Պատահած տեղն այցելում ենք: Ահա «Յոթ-վերքը»[7]: Մտնում ենք ներս. հենց դռան մոտ մի իսկական լուսավորչական բազկատարած աղոթում է: Մի քանի շիրակցի կանայք իրենց երեխաներով եկել են «Մայր Աստվածածնա վանքը»: Նրանցից մեկը դառնորեն լալիս է: Մի տերտեր է մոտենում մեզ և տանում Աստվածածնա պատկերի մոտ, ուր կան մի քանի ձեռագրեր: Մեզ հետ ներս է մտնում գեղջուկ կինը, և ամենքս անցնում ենք մեր գործին—նա լաց է լինում Աստվածածնա պատկերի առաջ, մենք դիտում ենք ձեռագրերը, իսկ երիտասարդ տերտերը բացատրում է: Ցույց է տալիս մի արծաթակազմ ձեռագիր ավետարան և հայտնում, որ դա գրված է 300 տարի առաջ «Թադեոս առաքյալի ժամանակ»: Իհարկե մենք մի փոքր կարմրում ենք մեր տգիտությունից: Մենք միայն Մաթուս աղային գիտեինք, որ ապրել է 900 տարի[8]: Բայց որ Թադեոս առաքյալը 1700տարեկան էր, այդ մի հազվագյուտ նորություն եղավ մեզ համար: Հիշատակարանից երևում էր, որ այդ ավետարանը դդմաշենցի է, մի անգամ հրդեհված, մի անգամ էլ գետի մեջ թաքնված է եղել «անօրեններից», և ձկները բավական կրծել են մի կողը: Ու մինչ մենք դիտում էինք այդ ձկնկեր ձեռագիրը՝ շիրակցի կնիկը լացակումած աչքերով մոտեցավ մեզ ու

ինքն էլ սկսեց դիտել ու լսել մեր գիտական հարց ու պատասխանները: Մի անհուն վիշտ և մորմոքող կսկիծ կար նրա աչքերում, որ երբեք չեմ մոռանա:

Հեռացանք եկեղեցուց, բավական գիտական տեղեկություններ իմանալով:

Ահա և շուկան, Լենինականի ստամոքսը: Մթերքը լի է և էժան, մինչև անգամ նկատելի է մաքրությունը, որ առաջվա շուկաների համար ստորություն էր համարվում: Ընդհանուր ժխորի միջից լսվում է մրգավաճառի գոռոցը. «Լավ ծիրանը պարպավ, վա՛յ չուտողին, քելե՛ք, հայե՛ր, տանձ ու խնձորը օչերեդով կը ծախենք»: Եվ նայում ես «օչերեդին», ուր մի հատիկ մարդ չկա:

Մտնում ենք մի սրճարան, որի պատերից կախված է դիոլների մի զարհուրելի քանակություն: Բանից դուրս է գալիս, որ սրճարանը միաժամանակ զուռնաչիների ռեզիդենցիան է: Նստում ենք սուրճ խմելու: Դիմացներս նարդի են խաղում: Մեկը երևի վաճառական է: Երկու ֆինջան սուրճ են բերում երկու խաղացողի համար: «Ինչո՞ւ երկու հատ բերիր»,— հանդիմանում է վաճառականը և ակնարկում է, որ իր երկու կողմը նստածների համար էլ բերեն:

Գյումրեցին ինչպե՞ս կարող է աննկատելի նստել, վեր կենալ:

Մի բան միշտ աչքի է զարկում Լենինականի մեջ: Ամենուրեք մի հետաքրքիր երևույթ, մի առանձնահատկություն, մի կուրյոզ զբաղեցնում է աչքդ:

Անցնում ես գլխավոր փողոցներից մեկով: Ահա ամբողջ մայթը բռնված է մարդկանցով: Ահագին մի խումբ թափվել է ինչ-որ բանի վրա: Կարծում ես, թե մեկն ուշաթափվել է, կամ Հնդկաչինից չտեսնված ապրանք են բերել ծախելու: Մոտ գնում և ի՞նչ ես տեսնում: Կիսագրագետ մի մարդ, պատառոտած շորերով, նստել՝ «Ասլին ու Քյարամն է» կարդում: Կարդումէ հեգելով, ծանր: Բայց շրջապատողները լսում են ամենայն ջերմեռանդությամբ: Կամ տեղական լրագրում կարդում ես, որ երաժշտական ստուդիայում սովորում են 600 թառիստներ և ջութակահարներ:

Հաշվետուն հույս է հայտնում, որ եթե գործերն այսպես գնան՝ շատ շուտով դրանց թիվը կհասնի հազարի:

Արդյոք հաշվետուն մի փոքր չի՞ չափազանցնում. . . Ամբո՛ղջ Լենինականը կթողնի իր բան ու գործը և կմտնի երաժշտական ստուդիա: Ապահովաբար նրանք չեն իմանում, որ իրենց քաղաքում ստուդիա կա: Լենինականը տեքստիլ գործարան ունենալուց առաջ ինքը մի գործարան է բանաստեղծների և աշուղների:

Լենինականը հումոր ունեցող քաղաք է: Նրա մեջ պոտենցիալ եռանդ կա: Քաղաքի բնիկը եկվորի հետ շուտով է մտերմանում և լծվում կուլտուրական աշխատանքի: Լենինականցին հետաքրքրվող է, անհանգիստ: Նա հեշտությամբ է վարակվում հասարակական, քաղաքական, կրոնական շարժումներով: Երկաթուղու դեպոյի բանվորների մեջ շատ լենինականցիներ տեսանք: Երևի նախկին արհեստավորներից շատ կան նրանց մեջ:

Գնում ենք ջրանցքը[9] տեսնելու:

Դարձյա՞լ ջրանցքը. . . Այո, ճիշտ է, շատ գրվեց այդ մասին: Թերևս ճիշտ լինի այդ նկատողությունը: Բայց չէ՞ որ այդ հարցը կարելի է տալ նաև այն բազմահազար այցելուներից ամեն մեկին, թե ինչո՞ւ են գնում տեսնելու մի հասարակ բան-ջրանցքը: Մանավանդ, որ շատ անգամ նկարագրվեց և նկարվեց այդ ջրանցքը:

Այստեղ մի ուրիշ հոգեբանություն կա: Ամեն այցելու կամենում է իր աչքով տեսնել այն **գործը, որ որ կատարվում է: Եվ նպատակահարմար գործը:** Մենք ապրում ենք Հայաստանի **իրականության** շրջանում: Ֆրազների շրջանն անցել է: Ջրանցքները մեր երկրի պատմության կատարյալ բեկման կետերն են: Նրանք մեկն են մեր կյանքը կերպարանափոխող այն ֆակտորներից, որ իրար հետևից պիտի գան: Եվ Հայաստանի տնտեսական վերաշինությունը, նրա տնտեսության ինտենսիֆիկացիան կլուծեն նրա բոլոր հարցերը: Այդ բարձր տնտեսությունը պիտի բարձրացնի հայ աշխատավորության կուլտուրականությունը և նա է, որ նրան պիտի դարձնի և՛ գիտակից, և՛ ուժեղ:

Այս բնազդով է, որ մենք շարունակ այցելում և շարունակ նկարագրում ենք մեր ջրանցքները:

Կառքը սլանում է ձորափով: Ամայի է այդ ձորը: Տարօրինակ, դաժան ժայռերից կախվել են խիստ ստվերներ և թանաքի պես թափվում են ցած: Դեղնակարմիր շիրիմի նման գետափին բարձրանում է Մարմաշենի վանքը[10]:

Արևն այրում է ամբողջ Շիրակի դաշտը, ողողում ինչ-որ անհասկանալի թախիծով: Ձորը, քարափները, հեռավոր ճամփաները համակված են այդ թախիծով: Դա հատուկ է լեռնային, ամայի բնության:

Ահա և ջրանցքը: Իջնում ենք կառքից ու մտնում նրա ավազանը և գնում դեպի վեր: Քանի հողաշերտի շրջանն ենք՝ ջրանցքը թվում է հասարակ բան. բայց ահա մտնում ենք տունելը, որ փորված է համառ քարի մեջ:

Հասարակ տունել, և ո՞ւմ պիտի զարմացնես նրա նկարագրությամբ: Տունելներ շատ ենք տեսել: Բայց այսպիսի գործ Շիրակը չի տեսել—այս է կարևորը:

Այս ամայի ձորափին, ուր դեղնա-կարմիր մամուռի մեջ թախծում է հնադարյան վանքը, և որի մոտերքը, գետինը փորփրելով, բնակարան է դարձրել ուրարտական գյուղը, մեծ գործ է այդ ջրանցքը: Ահա Կապս գյուղը, ահա և նրա կողքին տեխնիկական և վարչական մարմինների բնակարանները: Այնտեղ որջեր, այստեղ մոտորներ, շոգի, եռուն աշխատանք: Այս համեմատությունն է, որ մեծացնում է նշանակությունն ամեն իրի, ամեն ձեռնարկության:

Փոքրիկ շինություններ են այդ բնակարանները: Էլեկտրական լույսի կայան, բաղնիք, խոհանոց-ճաշարան, վարչության գրասենյակ, բանվորների կացարան, հիվանդանոց, ակումբ, բեմ, ընթերցարան և ժողովների հրապարակ. . . Բոլորը մինիատյուր, բայց **անհրաժեշտաբար** ներկա: Հոգ չէ, որ ջրանցքի գործն ավարտվելուց հետո այս շինությունների մեծ մասը պիտի վերացվի, ինչպես ասաց ինժեներ Ակիմովը: Բայց սկզբունքը պիտի գործադրվի: Բանվորն իր օրական գործից հետո պիտի հաղորդակից լինի կուլտուրական նախագիտելիքների, զբոսանքի:

Ես չկարողացա գնալ մինչև տունելի վերջին ծայրը: Ցուրտ էր տունելում և խոնավ: Ընկերներս նկարագրեցին այն աշխատանքը, որ կատարվում է ներսը, այդ խոնավության ու ցրտի մեջ: Ուրեմն այնտեղ, ուր ես չեմ կարողանում մի կես ժամ անցկացնել իբրև դիտող՝ մարդիկ կան, որ իրենց կրծքով ճամփա են բաց անում ժայռի մեջ, կռիվ են մղում նրա դեմ ամիսներ շարունակ. . . Եվ քանի՜ այդպիսի «ժայռեր» կան ներքին և արտաքին, որոնց դեմ կռիվ են մղել ու մղում են այդ մարդիկ:

Երբ «հիմնարկությունները» դիտելով անցանք «գրադարան-ընթերցարան», որ մի լուցկու տուփ էր իսկապես, և երբ տեսա գրադարանապետին, որ միկրոսկոպիկ սեղանի առջև կքած դասավորում էր լրագրերը՝ խոստովանում եմ, որ սիրտս նեղացավ այն անհրապուրիչ, դժվար պայմաններից, որոնց մեջ առաջ է տարվում մեր երկրի շինարարական գործը: Ուղղակի խղճի պարտք կա ամեն մի խորհրդային Հայաստանի բարեկամի առջև թե՛ բուն երկրում և թե՛ արտասահման՝ հարգել և օգնել այս տեսակ ձեռնարկներին և վերջ տալ շատախոսության: Ասենք՝ այդ շատախոսությանը կարևորություն էլ տվող չկա:

«Նա» փորում է **իր** ջրանցքը և դրանից դուրս ուրիշ բան չի ճանաչում:

Ջրանցքը նրան շատ բանից կփրկի:

Եվ գեղեցիկ է լենինականցու հետևյալ «լոպպազ» խոսքը.

— Կանալը լավ պրծուց մեզի: Թե չէ՝ էդ կաթն անիծած Աստվածամուննաթը շատ քաշեցինք:

***

Այցելեցինք ամերիկյան որբանոցներից մինը: «Կանգնի՛ր» գրված է «սահմանի» վրա անգլերեն, ռուսերեն և հայերեն: Կառքը կանգնում է: Առաջ է գալիս «սահմանապահը», մենք բացատրում ենք մեր այցելության նպատակը և թույլտվություն ստանալով ներս ենք մտնում:

Շուտով մեզ առաջնորդում են հաստատության զանազան մասերը, որ նախկին զորանոցներ են:

Տխուր տպավորություն:

Հազարավոր մանկական հոգիներ—հազարավոր հոգեբանություն, հոգեկան կյանքի մի ծով՝ փակված զորանոցների մեջ:

Պայմանները նրանց տվել են այն, ինչ հնարավոր է առայժմ նրանք ողջ-առողջ են, ստանում են որոշ չափով ուսում և արհեստ: Եվ ոչինչ քննադատել չենք կամենում: Միայն տպավորվում ենք:

Մրջյունների ձվերի պես ծեփված են լցված նրանք—այդ ճերմակազգեստ որբերը: Պատերի տակ, «փողոցներում», խաղատեղերում, սեղանատների առջև:

Մանուկներ, մանուկներ, մանուկներ. . . հոսում են գետերի պես, և աչքերդ շաղվում:

Ամեն մինը մի պատմություն է: Հայացքդ ուզում է կանգ առնել ամեն մեկի վրա, տեսնել նրան, թափանցել նրա հոգին, բայց հնար չկա: Նրանք շատ են, ազատ անցնում-դառնում, խուսափում են իսկույն, և միայն տեսնում ես մի բազմություն՝ երևույթների, ուրուների: Եվ սա հեքիաթ չէ, ոչ էլ երազ:

Մտնում ենք ճաշարանը: Անվերջ սեղաններ, ամաններ, միանման ամաններ, որ սրբում են մանուկները՝ իրար մոտ, սիմետրիկ դնում անվերջ գդալներ, հացի պատառներ. . . Խոհանոցում աշխատում են դարձյալ իրենք, մանուկները: Դրած են իրար մոտ միանման կաթսաներ, ուր եփվում է կերակուրը, մեծ տաշտերի մեջ, անկյուններում անվերջ բեռներ, կարտոֆիլի, կաղամբի, հագին քանակ միանման հատիկների, կտորների շեղջերի. . .

Ննջարա՜նը. . . անվերջ մահճակալներ, սրբիչներ, դարձյալ ննջարան, ու կրկի՜ն, նորի՜ց, էլի՜ մահճակալներ. . .

Ամենուրեք համարներ, թվեր՝ մահճակալի, սրբիչի, մանկան:

Մանկական հոգո՜ւ. . .

Ահա զույգ-զույգ շարած տանում են նրանց ճաշարան: Ահա մի ուրիշ խումբ բերում են ճաշարանից: Շատ են փոքր նրանք, դեռ նոր են աշխարհը տեսնում: Ահա «օրիորդը» բռնել է նրանցից մեկի ձեռից և իր հետևից տանում է մյուսների շարանը: Ու նրանք գնում են՝ մղված ինչ-որ մի ճակատագրական ձեռքով, գնում են լռիկ, հնազանդ:

Ահա բակերը, խաղատեղերը: Այնտեղ ֆուտբոլ են խաղում:Մինը հեռվում շվի է ածում: Ահա մի ուրիշը փռվել է մեջքի վրա դաշտում և մեն-մենակ ընկած է ինչ-որ մտքի հետև:

Ահա և արհեստանոցը՝ փականագործական, դարբնի, կոշկակարության և ատաղձագործության: Նաև բրուտանոց: Այդտեղ սովորում են միայն տղերքը՝ համաձայն իրենց հակումների: Բաժիններ կան, ուր աշակերտը պիտի սովորի սկզբնական գիտելիքներ, ցույց տա ընդունակություն և անցնի ավելի բարձր աստիճանի: Արվեստի ուսումն ու ծավալը մեծ չէ: Բայց որբերը ցույց են տալիս մեծ ընդունակություն: Փորձեր են անում մի-մի բան հնարելու, ստեղծագործելու: Մենք վրա հասանք մի պատկերահանդեսի: Շատ շնորհալի գործեր կան այդ պատկերների և արձանների մեջ: Վանիկ, Շավարշ, Սարգիս, Մամիկոն, Հմայակ–սրանցից մեկն ու մեկը ապագայում անուն է հանելու իբրև տաղանդավոր նկարիչ: Սրանք 12–14 տարեկան տղաներ են: Հետաքրքիր է Սարգսի «Սայլերը», «Մեր գյուղից գալիս եմ արտը», «Արտից վերադառնում եմ տուն» հիշողություններ իր 1916 թվի կյանքից: Մի կոմիկ տեսարան՝ «Դասերդ լավ սովորեք»— ուսուցիչը դասարանում: Շավարշը նկարում է որբանոցային կյանք: Հմայակը՝ աշխատանքի տեսարաններ: Չեմ հիշում սրանցից որի ձեռի գործն է մի նուրբ արկղիկ՝ գեղեցիկ բանվածքներով:

Շնորհակալություն ենք հայտնում մեզ առաջնորդող կառավարչուհուն, որ զարմացնում է մեզ իր եռանդով և ջերմ սիրով դեպի երեխաները, նաև ահաբեկիչ հիշողությամբ ամեն անվան ամեն գործի մանրամասնության:

Եվ հեռանում ենք այն վայրից, ուր ապրում են ամենաընդունակ տղաներ, որ ապագայում՝ ավելի հաջող պայմաններում՝ պիտի դառնան մեր սոցիալիստական հայրենիքի ուժեղ քաղաքացիները:

***

Երկաթուղու դեպոն: Անպատճառ որոշել էինք գնալ: Հետաքրքիր է՝ մի հինգ-վեց տարի առաջ կգնայի՞նք դիտելու այդ դեպոն: Խոստովանենք —ո՛չ: Սակայն պատերազմը, մեծհեղափոխությունը, վերջին տարիների իրադարձը մեզ դարձրել են ռեալիստ: Երկաթուղի, դեպո, վագոնի նորոգություն, նոր շոգեմեքենա— այս ամենը հարևանցի զբոսանքի առարկա չեն: Դրանք սերտ կապված են մեր կյանքի առօրյայի հետ:

Մեր հայրենիքի վերաշինությունը միայն հայրենասիրության հարց չէ: Ամեն մի նոր շոգեմեքենա, նոր վագոն, ամեն մի նոր գործիք, նոր մատերիալ ազդում է մեր առօրյա, անգամ՝ անձնական տնտեսության խնդրին:

Մենք անձնական փորձով գիտենք, թե մեր տնտեսությունը որ չափով կապված է համաշխարհային տնտեսության հետ, և այդ տնտեսության շարժումները որքան անմիջապես ազդում են մեր երկրի շարժումներին:

Եվ մենք, գրագետ մարդիկ դառնում ենք «տնտեսագետներ» ու գնում ենք դեպո տեսնելու և հետևելու:

Բանվորներն էլ իրենց կողմից ցույց են տալիս առանձին եռանդ բացատրելու, ցուցադրելու, սովորեցնելու:

Եվ ի՞նչ. սովորում ենք բանվորներից: Սա էլ նրանց «գրական արվեստն է»: Եվ ահա մեր ընկերներից մեկը հանում է ծոցատետրը և (որպեսզի չմոռանա իր թղթակցության մեջ հիշելու), մեկ-մեկ հավատարմությամբ նշանակում է, թե շոգին որտեղից ուր է մտնում և ուր դուրս գալիս և ինչ է կոչվում այսինչ պտուտակը. . .

Մի փոքր ձեռ ենք առնում նրան:

Ախր այդ մանրամասնությունները ամեն կուլտուրական մարդ տեսած է ավելի բարձր կուլտուրական երկրներում, օրինակ Թիֆլիսում, հիմի Լենինականի դեպոն ի՞նչ մի նշանավոր բան է: Բայց այստեղ մի բան կա ճշմարիտ,— դա նոր հետաքրքրությունն է մեր տնտեսական կյանքի և տնտեսական քաղաքականության: Սա նոր կուլտուրայի սկիզբն է: Երբ բանաստեղծը գրի է առնում բանվորի բացատրությունները և բանվորն էլ երկար-բարակ բացատրություններ է տալիս, ուղղակի ուզում է սորվեցնել՝ այստեղ նկատելին այն չէ, որ «վինտերն ու շոգու շարժումները» չպետք է արձանագրել և կարիք չունի բանվորը մտնելմանրամասնությունների մեջ — այստեղ կարևորն այն է, որ ամենքը ձգտում են սովորել ու սովորեցնել նոր կյանք:

Բանվորները ցույց են տալիս «հիվանդ», «կիսառողջ» և «հանգստյան եկած» շոգեմեքենաները: Ահա մի ուրիշ տեղ վագոններ են նորոգում: Երբեմն նորոգում են շոգեմեքենաներ ու վագոններ և մի որևէ տոնի առթիվ նվիրում պետության: Աշխատանքը ու մի մասեր իրար բերելով, սարքելով:

Դեպոյից անցնում ենք բանվորական ակումբ: Շատ կանոնավոր մի շենք, Շիրակի դաշտի հենց դռանը:

Նայում ենք գրադարան-ընթերցարանը: Սեղանների վրա փռած են հին ու նոր գրքեր, որոնց մեջ մոլորված աչքերով ինձ է նայում. . . «Սեբեոս եպիսկոպոսի պատմությունը»: Գրադարանը կարգի է բերվում, հույս կա, որ կհարստանա շատ շուտով:

Տեսանք ուրիշ շատ շինություններ և «սեմաֆորից սեմաֆոր» ամեն ինչ կարգին գտնել համարձակվելով, գոհ հեռանում ենք կայարանից:

Հետևյալ օրերը նվիրում ենք քաղաքի այլ մասերի այցելության: Տեքստիլ գործարանը դեռ պատրաստության շրջանումն է: Միայն մեքենաները տեսանք:

Հիշատակելի է նաև լաբորատորիան, ուր կա մի բրուտանոց և ուր հիմք է դրած երկրաբանական մուզեյի:

Այսպիսով, հին Ալեքպոլը հետզհետե դառնում է նոր Լենինական: Հինն ու նորը իրար կողքի դեռ ապրում են: Իհարկե, հինը տեղի կտա, բայց նա դեռ ունի ուժեղ տրադիցիա, որ հետզհետե պիտի թուլանա:

Կայարանումն ենք. սպասում ենք գնացքին: Հետզհետե լցվում են ճամփորդները: Բոլորն շտապում են:

Անվրդով են միայն երկու-երեք հոգի: Նստել են սեղանի շուրջն և ստամոքսները պնդում են: Աշտարակ պիտի գնան: Ամբողջ գիշերը խմել են, ամբողջ աշխարքը պիտի տեսնի և եկել հիմի հրապարակով «թաշախուստ» են բանեցնում: Ականջիս է հասնում.

— Այ օղուլ, ես իմ տունը շաքար չեմ ջարդե՝ դուն կուզես որ աս հոր-հոգի անիծած աշխարքը փետ ջարդեմ:

Գնացքը շարժվում է: Ես կարծում եմ, որ այդ լենինականցին մի օր «փետ կը ջարդե»: Գուցե և ջարդում է հիմա: Բայց հին առևտրականի լեզուն դեռ պահել է հին դարձվածները. . .

Եվ դեռ երկար մտածում եմ «շաքար ու փայտ» ջարդող Լենինականի մասին:

ԼԵՆԻՆԱԿԱՆ

(Էջ 10)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1924, № 219 և № 223: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 ՍՍՀՄ կենտգործկոմի 1924 թ. փետրվարի 26-ի որոշմամբ Ալեքսանդրապոլ քաղաքը վերանվանվեց Լենինական:

2 Հավանաբար նկատի ունի լենինականցի հանրահայտ զվարճախոս Պոլոզ Մուկուչին, որին նմանեցնում է Ալֆոնս Դոդեի վեպի պարծենկոտ հերոսին:

3 **«Բանվոր» օրաթերթ** — օրգան Հայաստանի ԿԿ(բ) Լենինականի գավկոմի, Լենքաղգործկոմի, գավպրոֆ բյուրոյի և երկաթուղային արհմիության: Հիմնադրվել է 1923 թ. :

4 **Լենինականի օպերա — օպերետային** թատրոնի բացումը տեղի է ունեցել 1924 թ. հունիսի 17-ին «Ֆաուստ» օպերայի բեմադրությամբ: 1926 թ. թատրոնը դադարեցնում է աշխատանքը, ստեղծագործական ուժերը տեղափոխվում են Երևան:

5 **Ֆուտուրիզմ** (լատիներեն futurum—ապագա) — անկումային, ձևապաշտական հոսանք XX դարի սկզբի գրականության և արվեստի մեջ: Ծագել է Իտալիայում, արտացոլելով իմպերիալիստական ռազմամոլ բուրժուազիայի գաղափարախոսությունը: Ֆուտուրիզմն իր հետևորդներն ունեցավ շատ երկրների պոեզիայում և կերպարվեստում:

6 «Վառարանից չսկսել վալսը» ռուսական ասացվածքի բառացի թարգմանությունն է: Այսինքն՝ չսկսել անպայման սկզբից:

7 **«Յոթ վերք»** — եկեղեցի Լենինականում, կառուցվել է XI դարում:

8 **Մաթուսաղա** — Աստվածաշնչային պերսոնաժ, որն իբր ապրել է 965 տարի:

9 Նկատի ունի Շիրակի ջրանցքը, որը 1924 թ. կառուցման ընթացքի մեջ էր:

10 Գտնվում է Ախուրյանի շրջանի Մարմաշեն (նախկինում՝ Վերին Ղանլիջա) գյուղի մոտ, Ախուրյանի ձախ, բարձրադիր ափին: Շինարարական աշխատանքներն սկսել են 986 թ. և ավարտել 1029 թ. :